

Հողմիկ

Վարչական ղեկավար՝ Կյուրեղյան Աշոտ

Յեռ 093-62-58-05

Մակերես՝ 13.7կմ²

Բնակչություն՝ 464

hoghmik.shirak@mta.gov.am

Գյուղ Ամասիայի տարածաշրջանում, Ամասիա գյուղից 3-4կմ հարավ, մարրզկենտրոնից գտնվում է 22կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Իլլի, Իլլի Ղարաքիլիսա, Իլլու անվանումները: Հողմիկ է վերանվանվել 1978 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ:

Գյուղը տեղադրված է Իլլի գետի ափին, լեռնալանջի վրա՝ ծովի մակարդակից 1800մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Գյուղում եղել են մասնակի ավերվածություններ 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից:

Գյուղից քիչ հեռու հայտնաբերվել է հին հունական՝ հելլենիստական ժամանակաշրջանի մեծ բնակավայրի մի հատված, որն ըստ երևույթին եղել է պաշտպանական կառույց: Գյուղում հին եկեղեցու տեղում 1850 թ-ին կառուցվել է նոր եկեղեցի:

Գյուղի բնակչության նախնիների մի մասը գաղթել է Արևմտյան Հայաստանի Բասենի, Մուշի շրջաններից, Կարսի մարզից 1829-1830թթ: 1831 թ-ին գյուղն ունեցել է 175, 1897 թ-ին՝ 762, 1926 թ-ին՝ 462, 1939 թ-ին՝ 736, 1959 թ-ին՝ 324, 1970 թ-ին՝ 417, 1979 թ-ին՝ 425 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 464 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 44%, կանայք՝ 56%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 51%, հետաշխատունակներ՝ 20%: Ունի 113 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 228հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 109 և 461 հեկտար:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Հողմիկ
Բնդեքս՝ 2701